

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի հայցարդ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, կապված առանձին երկրների առանձնահատկությունների, ինչպես նաև քաղաքական իրավիճակի ու շուկայական կառույցների զարգացման հետ, տարբեր է համախմբված և պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը¹։ Միաժամանակ հարկ է նշել, որ կան նաև այնպիսի ընդհանուր գծեր, որոնք բնորոշ են շուկայական տնտեսություն ունեցող երկրների բյուջեներին, այսինքն՝ այդ երկրներում պետական բյուջեի եկամուտների գերակշռող բաժինը ձևավորվում է հարկային եկամուտներից։ Դրանով էլ պայմանավորված է հարկային համակարգի նշանակությունը պետական կենտրոնացված եկամուտների ձևավորման գործում²։ Անշուշտ, դա անշաղի կարևոր է հարկային համակարգի արդյունավետության զարգացման հարցերի հիմնավորման առումով։

Հիմք ընդունելով աշխատանքի առանձին բաժիններում կատարված վերլուծության արդյունքները՝ փորձենք մոտեցմամբ գնահատել և հիմնավորել ՀՀ հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետությունը, դրա կիրառման նպատակահարմարությունը հետևյալ հաջորդական քայլերով.

- ընտրել հարկային համակարգի արդյունավետությունը գնահատող ցուցանիշների համախումբ և որոշել դրանց միջև կոռելյացիոն կապերը,
- ձևավորել հարկային համակարգի արդյունավետությունը բնութագրող մոդել,
- ստացված արդյունքների հիման վրա կատարել համապատասխան եզրահանգումներ և ներկայացնել առաջարկներ սպասվող բարելավումների վերաբերյալ։

Այդ նպատակով անհրաժեշտ է ըստ համապատասխան մոտեցման ընտրել հետևյալ ցուցանիշների համախումբը.

- **Դ**՝ հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության գործակից՝ որպես կառուցվող ռեգրեսիոն հավասարման արդյունքային ցուցանիշ,

¹ Տե՛ս **Фишер С., Дорнбуш Р., Шмалензи Р.**, Экономика /пер. с англ./ М., „Дело” ЛТД, 1993, էջ 12։

² Տե՛ս ՀՀ Կառավարության ծրագիրը, Եր., 2012, էջ 54-55։

- T_1 ՝ շահութահարկ/ՀՆԱ հարաբերակցության գործակից,
- T_2 ՝ եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցության գործակից,
- T_3 ՝ ավելացված արժեքի հարկ/ՀՆԱ հարաբերակցության գործակից,
- T_4 ՝ ակցիզահարկ/ՀՆԱ հարաբերակցության գործակից,
- T_5 ՝ մաքսատուրք/ՀՆԱ հարաբերակցության գործակից:

Ընտրված ցուցանիշների հաշվարկային մեծությունները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետության գնահատման ցուցանիշների արժեքները³

Ցուցանիշներ	2005	2006	2007	2008	2009	2010
T ՝ հարկային եկամուտներ / ՀՆԱ	0.136	0.138	0.154	0.168	0.160	0.164
T_1 ՝ շահութահարկ/ ՀՆԱ	0.021	0.025	0.024	0.024	0.026	0.022
T_2 ՝ եկամտահարկ/ ՀՆԱ	0.012	0.013	0.015	0.015	0.019	0.021
T_3 ՝ ավելացված արժեքի հարկ / ՀՆԱ	0.065	0.062	0.079	0.089	0.081	0.086
T_4 ՝ ակցիզահարկ / ՀՆԱ	0.017	0.015	0.013	0.013	0.014	0.014
T_5 ՝ մաքսատուրք / ՀՆԱ	0.007	0.007	0.008	0.010	0.008	0.008

Հիմք ընդունելով աղյուսակի տվյալները՝ որոշենք ընտրված ցուցանիշների միջև առկա կոռելյացիոն կապերը: Կոռելյացիայի գործակիցների արժեքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Նախընտրելի համարված ցուցանիշների միջև կոռելյացիոն կապերը բնութագրող գործակիցների արժեքները

	T_1	T_2	T_3	T_4	T_5	T
T_1		0.143713	0.106627	-0.52322	0.196116	0.228336
T_2			0.703694	-0.48241	0.261712	0.228336
T_3				-0.7792	0.840254	0.987667
T_4					-0.72761	-0.81431
T_5						0.839372
T						

³ Մոդելում ներառված գործակիցների հաշվարկման համար օգտագործվել են ՀՀ ԱՎԾ համապատասխան տվյալները:

Աղյուսակ 2-ից հետևում է, որ T արդյունքային ցուցանիշի հետ սերտ դրական կապի մեջ են գտնվել T_3 և T_5 փոփոխականները, այսինքն՝ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճի առումով էական է գնահատվել նաև կոռեկացիոն կապվածության տեսանկյունից ավելացված արժեքի հարկի և մաքսատուրքի ազդեցությունը: Հատկանշական է, որ երկու հիմնական ուղղակի հարկատեսակների՝ շահութահարկի և եկամտահարկի ազդեցությունը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա եղել է թույլ դրական կապի մեջ՝ կոռեկացիայի գործակցի ընդունած 0.228 արժեքով: Նշվածի համատեքստում հետաքրքիր վարքագիծ է դիտվում ակցիզահարկի ազդեցության տեսանկյունից, որի գծով կոռեկացիայի գործակիցը հարկեր/ՀՆԱ արդյունքային ցուցանիշի վրա ունեցել է նկատելի բացասական ազդեցություն: Այս հանգամանքը փաստում է, որ հայեցակարգային ուղղություններից մեկը ՀՀ հարկային համակարգի կառուցվածքային տեղաշարժերում պետք է հարկային եկամուտներում ակցիզահարկի նվազեցումը լինի, ինչը ենթադրում է ենթաակցիզային ապրանքատեսակների ցանկի վերանայում:

ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատման ռեգրեսիոն հավասարման կառուցման հաջորդ քայլում, ըստ դիմամիկ շարքերի, սպառնալիք ընտրված փոփոխականների և արդյունքային ցուցանիշի համադրելիության սկզբունքը.

Աղյուսակ 3

ՀՀ հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետության գնահատման ցուցանիշների համադրելիությունը⁴

	T_1	T_2	T_3	T_4	T_5	T
2005	0,840	0,571	0,730	1,000	0,700	0,810
2006	1,000	0,619	0,697	0,882	0,700	0,821
2007	0,960	0,714	0,888	0,765	0,800	0,917
2008	0,960	0,714	1,000	0,765	1,000	1,000
2009	1,000	0,905	0,910	0,824	0,800	0,952
2010	0,880	1,000	0,966	0,824	0,800	0,976

Կիրառելով փոքրագույն քառակուսիների մեթոդը՝ կառուցենք ՀՀ հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետության գնահատման հավասարումը, որի վիճակագրական բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 4-ում:

⁴ Կառուցվել է ըստ յուրաքանչյուր փոփոխականի արժեքի՝
 $T_{\text{J համադրելի}} = T_{\text{J երկետ}} / T_{\text{J}}:$

**ՀՀ արկային համակարգի կառուցվածքի արդյունավետության գնահատման
ռեգրեսիոն հավասարման վիճակագրական բնութագրիչները**

Ռեգրեսիոն վիճակագրություն						
Կարգավորված R քառակուսի	0.97425					
Ստանդարտ շեղում	0.000021					
Դիստրիբյուցիոն	6					
Վարիացիայի և կոխարիացիայի վերլուծություն						
	<i>df</i>	<i>SS</i>	<i>MS</i>			
Ռեգրեսիա	5	0.032218	0.006444			
Մնացորդային արժեքներ	0	0	65535			
Ընդամենը	5	0.032218				
Հաստատման փոփոխական	Գործա- նկիցներ	P հավա- նականու- թյուն	Ստորին՝ 95%	Վերին՝ 95%		
Ազատ տնայամ	0.338721	0.95	0.33872050	0.3387205		
T ₁	0.050781	0.95	0.05078069	0.0507806		
T ₂	0.159125	0.95	0.15912462	0.1591246		
T ₃	0.262523	0.95	0.26252296	0.2625229		
T ₄	-0.04294	0.95	-0.0429383	-0.042938		
T ₅	0.269182	0.95	0.2691818	0.2691818		
ՄՆԱՅՈՐԱԹԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ				ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ		
Դիստրիբյուցիոն	Կոնֆա- տենսված Y	Մն. ար- ժեքներ	Ստան- դարտ մն. արժեքներ	Արդյունք- ներ	Yc	
1	0.809524	1.11E-16	1.290994	8.333333	0.80952	
2	0.821429	1.11E-16	1.290994	25	0.82142	
3	0.916667	0	0	41.66667	0.91666	
4	1	1.11E-16	1.290994	58.33333	0.95238	
5	0.952381	0	0	75	0.97619	
6	0.97619	0	0	91.66667	1	

Ելնելով աղյուսակի տվյալներից՝ ներկայացնենք ՀՀ արկային համա-
կարգի կառուցվածքի արդյունավետության գնահատման ռեգրեսիոն հա-
վասարումը.


$$T = 0.338721 + 0.050781 * T_1 + 0.159125 * T_2 + 0.262523 * T_3 + 0.04294 * T_4 + 0.269182 * T_5;$$

Ռեգրեսիոն հավասարման փոփոխականների համար ստացվել են հետևյալ կշռային ազդեցությունները.

- շահութահարկ/ՀՆԱ՝ 5,07 տոկոս,
- եկամտահարկ/ՀՆԱ՝ 15.9 տոկոս,
- ԱԱՀ/ՀՆԱ՝ 26.25 տոկոս,
- ակցիզահարկ/ՀՆԱ՝ - 4.29 տոկոս,
- մաքսատուրք/ՀՆԱ՝ 26.91 տոկոս:

Արդյունավետության տեսանկյունից գերակա ուղղություն ենք համարում ազատ անդամի արժեքին համապատասխան հարկեր/ՀՆԱ առավելագույն ցուցանիշի ապահովումը: Այսինքն՝ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը պետք է չգերազանցի 33.87 տոկոսային սահմանը:


Նկատի ունենալով, որ ՀՀ հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետության գնահատումը կատարվել է ըստ 2005-2010 թթ., հիմք ընդունելով ռեգրեսիոն հավասարումը և աղյուսակ 1-ի տվյալները, որոշենք դրա արդյունավետությունը բնութագրող լավագույն և վատագույն ժամանակահատվածները՝ ազատ անդամը հաշվի առնելու պայմանով: Կատարված հաշվարկները ներկայացվել են գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. ՀՀ հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետությունը բնութագրող լավագույն և վատագույն միջակայքերը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության օպտիմալ գոտու սահմանային շեմը հաշվի առնելու պարագայում

Ըստ գծապատկեր 1-ի՝ եթե ապահովվեին մեր կառուցած ռեգրեսիոն հավասարման փոփոխականների առաջարկվող կշիռները և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության օպտիմալ սահմանը, ապա 2005 թ. հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կլիներ 36.99%, 2006 թ.՝ 35.95%, 2007թ.՝ 36.46%, 2008 թ.՝ 36.78%, 2009 թ.՝ 36.58% և 2010 թ.՝ 36.73%:

Եթե նույնացնենք շրջանակներում չորոշվի հարկեր/ՀՆԱ հարաբերակցության օպտիմալ գոտու սահմանային շեմը՝ 33.87 տոկոսային կետը, ապա կստացվի հետևյալ պատկերը.



Գծապատկեր 2. ՀՀ հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետությունը բնութագրող լավագույն և վատագույն միջակայքերը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության օպտիմալ գոտու սահմանային շեմը հաշվի չառնելու պարագայում

Ըստ գծապատկեր 2-ի՝ եթե 2005-2010 թթ. միջև ընկած ժամանակահատվածում չորոշվի հարկեր/ՀՆԱ հարաբերակցության օպտիմալ գոտու սահմանային շեմը՝ 33.87 տոկոսային կետը, ապա հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի.

- 2005 թ.՝ 3.12%՝ փաստացի 13.6%-ի փոխարեն, շեղումը բացասական է՝ -10.48%,
- 2006 թ.՝ 2.08%՝ փաստացի 13.8%-ի փոխարեն, շեղումը բացասական է՝ -11.72 տոկոս,
- 2007 թ.՝ 2.59%՝ փաստացի 15.4%-ի փոխարեն, շեղումը բացասական է՝ -12.81%,
- 2008 թ.՝ 2.91%՝ փաստացի 16.6%-ի փոխարեն, շեղումը բացասական է՝ -13.69%,
- 2009 թ.՝ 2.72%՝ փաստացի 16%-ի փոխարեն, շեղումը բացասական է՝ -13.28%,
- 2010 թ.՝ 2.86%՝ փաստացի 16.4%-ի փոխարեն, շեղումը բացասական է՝ -14.34%:

Միջազգային ոլորտում մակրոմակարդակում «հարկային բեռ» ցուցանիշը բոլոր հարկերի և ՀՆԱ հարաբերակցությունն է, որի առավելագույն՝ 40-45% մեծությանը հասնելու դեպքում պետական բյուջե եկամուտների հետագա աճը հնարավոր է միայն հարկային հավաքագրումների կառուց-

վածքը փոխելու պարագայում, քանի որ հարկային փոփոխությունները կարող են ուղեկցվել տնտեսական և սոցիալական բազմաթիվ բացասական հետևանքներով: Ելնելով այս հանգամանքից, կարծում ենք՝ մեր առաջարկած մոտեցման շրջանակներում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության օպտիմալ գոտու սահմանային շեմը չկիրառելու դեպքում ՀՀ հարկային համակարգի կառուցվածքային տեղաշարժը կգնահատվի բավարար արդյունավետ: Մակայն հաշվի առնելով զարգացած երկրների փորձը, ինչպես նաև դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման խնդիրը՝ հեռանկարում ՀՀ հարկային համակարգում ուղղակի և անուղղակի հարկերի գծով կառուցվածքային տեղաշարժերը պետք է միտված լինեն տնտեսության զարգացմանը և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության արդյունավետ շեմի հաստատմանը:

ОГАНЕС КАРАПЕТЯН

Соискатель кафедры „Финансы”

АГЭУ

Оценка эффективности налоговой системы. - В рамках реализации фискальной функции налогов, государство максимально заинтересовано в максимизировании доходной части бюджета. В этой связи мероприятия налогового контроля, проводимые налоговыми органами, являются одним из основных инструментов реализации фискальной функции налогообложения. Современная налоговая система Армении, несмотря на свою молодость, уже успела накопить опыт. Постоянная реализация контрольной функции налогов динамично подстраивает налоговое законодательство под меняющиеся рыночные условия, что особенно актуально в условиях кризиса. В связи с тем, что вышеуказанные причины будут иметь негативное влияние на формирование доходной части бюджета, мероприятия по контролю за правильность исчисления и уплаты налогов и сборов в бюджеты всех уровней приобретают первоочередное значение.

HOVHANNES KARAPETYAN

Researcher at the chair of „Finance”

at ASUE

Estimating the Effectiveness of the Tax System. - As a part of the fiscal functions of taxes, the state is mostly interested in maximizing revenue. In this regard, tax control measures undertaken by the tax authorities, are only the main instrument for implementing the fiscal function of taxation. The current tax system in Armenia, despite its young age, has already managed to gain experience. Constant realization of tax monitoring function, dynamically adjusts tax laws under varying market conditions, which is especially important in times of crisis. Due to the fact that the above mentioned reasons will have a negative influence on the revenue side, measures to control the correctness of the calculation and payment of taxes and duties to the budgets of all levels are of great importance.